Քյաքյոլըտ սանդրեմ ոսկա սանդրով,
որթի ջան, | 2

Մարմանդ տուն կյաս ծին յհարած, որ-
թի ջան, | 2

Ոխճարն ասել, սառնացել ես, չես կյալի, | 2
Նզարնությունից տեղյակ-անտեղ չես կյալի:
Աչկըտ փակել, քունտ ես առել, բալիկ ջան, | 2
Պապիկը քու կարոտից սիրտն ա շաղել,
բալիկ ջան,

Զարթնիր տեճամ որդի՞ ես քնել,
Ա՛յ բալանե՛, ա՛յ բալանե՛, ա՛յ բալա՛:

## ՍԳԵՐԳԵՐ

### 15(357)

Վայե՛, քու դյուրդը տանեմ, Հայկանուշ աքիր
ջա՛ն,
Վայե՛, քու արածիցը զատ չհասկացա,
Ջանին մատաղ կըլեմ, Հայկանուշ աքիր,
Հայկանուշ աքի՛ր:
Ասա տեճամ, էնքան պյճներ վըրրդիա՞ն
ըսեցիր,
Վըեր գրագետ չիր, ա՛յ կնիկ, ա՛յ կնիկ:
Վա՛յ, մեզ էրեցի՛ր, խրովեցի՛ր, Հայկանուշ
աքիր ջան,
Վա՛յ, մեզ յաման լըցըցրիր, Հայկանուշ աքիր
ջան,
Վա՛յ, ես քու ջանին մատաղ կըլեմ, ա՛յ կնիկ,
Ա՛յ անբախտ Հայկանուշ աքիր ջա՛ն:
Լաց կըլենք, կսաե՛նք,
Ամեն մի մատըտ ոսկի էր, Հայկանուշ աքիր
ջա՛ն,
Քու պտղունցը ոսկի էր, Հայկանուշ աքիր
ջա՛ն:
Համա ծըծիլի ես տվել,
Սևը մեչ դոլ արել, սիպտակը տոււ դոլ արել,
Հայկանուշ աքիր, է՛յ, է՛յ:
Վա՛յ գիդըմ ես ի՞նչ եմ ասըմ, Հայկանուշ
աքիր,
Քու էն լավ-լավ օրերն ա,
Վըեր մեր միտն ա կյալի,
Համա շատ ես էրվել,
Շատ ես տանջվել, Հայկանուշ աքի՛ր,
Հա՛յ գիդըմ ես, ի՞նչ եմ ասըմ, Հայկանուշ
աքիր ջա՛ն,
Քու վըետի դիբածը աչկիտ լիսին ա դիբել,
Աչկըտ ման ես ածել,
Քու ջահել-ջիվան նշանածը
Ծեռիցըտ խլիլ ես տվել, վա՛յ:
Հա՛յ, ա խեղճացած կնիկ,
Մի խղճանա ցավըտ տանեմ է՛յ:
Վա՛յ, սաղ ըլեն քու թոռները,
Վա՛յ, սաղ ըլեն քու ծոռները
Քեզ ուսին կըտնեն,
Կտանեն, կթաղեն, է՛յ:
Է՛ գիդըմ ե՞ս ինչ եմ ասըմ, Հայկանուշ աքիր,
Լոխի պյճն էլ արել ես,
Լոխի հետի էլ ոսկի ես ըլել,
Ես քու ցավը տանեմ, Հայկանուշ աքիր ջան,
է՛յ:
Վա՛յ գիդըմ ես ի՞նչ եմ ասըմ, Հայկանուշ
աքիր,
Հարսըտ սարին ես պահել,
Թոռներըտ սարին ես պահել,
Հները-տները մաշոիր պահել ես,
Լոխի պյճն էլ արել ես, արել ես, է՛յ:
Ասըմ ա, լավ գիդըմ ես ի՞նչ եմ ասըմ,
Հայկանուշ աքիր ջա՛ն,
Կյանքըտ էնքան վատն ա ըլել,
Համա վըեր քու նշանածին
Բանակ ես ճըմփու տըրել,
Յաման ես ճամփեն պահել,
Հայկանուշ աքիր, Հայկանուշ աքիր, է՛յ, է՛յ:
Հը՛, բա վըեր խըմբըրը եկավ,
Հը՛, բա վըեր նրա սև թուխտը եկավ,
Տոււ յաման ես դըլըըցրել,
Դյուրդըտ տանեմ, Հայկանուշ աքիր, է՛յ:
Հա՛յ ա՛յ, հա՛յ ա՛յ շաղված-շփոթված,
Հայկանուշ աքիր,
Հա՛յ գիդըմ չեմ,
Շատ պյճն ունեմ ասիլի,
Համա դե կարըմ չեմ,
Խեխտըըմ ա, է՛յ, է՛յ:

### 16 (358)

Մամա ջա՛ն, մամա՛,
Դո՛ւ իմ երեխաներին լավ պահեցիր,
Այ մամա ջա՛ն, ա՛յ մամա ջա՛ն:
Դո՛ւ, ես քու ծեռներին մատաղ,
Ոսկի թաթերիտ մեռնեմ,
Այ մամա ջա՛ն, մամա ջա՛ն:
Տոււ ինչո՞ւ համար գնացիր, մամա՛ ջա՛ն,
Քո՛ւ ոսկի ձեռքերտ որդի ժաժ տամ,
Ա՛յ մամա ջա՛ն:
Ո՞նց կանենք մենք մամա՛ ջա՛ն, ա՛յ,

Ա՜յ իմ խելունք մամա ջա՜ն,
Ա՜յ իմ ծանր ծով, աշխատասեր մամա
ջա՜ն,
Քո՛ւ ոսկի ձեռքի՜ն մեռնե՜մ,
Ա՜յ մամա ջա՜ն, ա՜յ:
Ա՜յ իմ խելունք մամա ջա՜ն,
Ա՛ մեծ տուն ու տեղ մամա ջա՜ն,
Ա՜յ իմ ծանր ծով մամա ջա՜ն,
Ա՜յ իմ կեսոր մամա՜ ջան, ա՜յ, է՜,
Խելունք մամա ջա՜ն, ա՜յ, ե՜ ե՜:
Բա քու երեխաներին, թոռներին
Պահեցի՜ր, բարը չկերար, մամա՜ ջա՜ն,
Ինչո՞ւ համար գնացիր, մամա ջա՜ն,
Քու ոսկի ձեռքերին մեռնեմ,
Ա՜յ մամա ջա՜ն, ա՜յ, ա՜յ:
Իմ խելունք, իմ տուն ու տեղ,
Մեր դուռը չփակեյիր, մամա ջա՜ն,
Խելունք ջա՜ն, մամա ջա՜ն:

**17 (359)**

Մնոյին տասներկու երեխա ունի՜,
Մնոս մեռել ա, քառասուն տալի ժամանակն
ա՜,
Մնո ջա՜ն, է՜յ:
Ես ասեղ, մըքքասեղ, հուլունք կհավաքեյի՜,
Մնոյիս տասներկու երեխան զոհի կպահեյի՜:
Մնո ջան, ո՞ւր ես գնացե՜լ,
Տասներկու երեխան ո՞նց կընիկարմատ
կպահե՜,
Մնոս էլ հետ չի գալու, Մնո ջա՜ն,
Ինքը գնա՜ց, հավիտյան կորա՜վ,
Էլ Մնո չկա աշխարըմը՜ս:

**18 (360)**

Վա՜հ քիրա ջան, քիրա ջան, քիրա ջա՜ն,
Էն ե՞փ իր մեռել, վըեր միհ մեռար,
Քիրա ջա՜ն, է՜յ:
Էտ մի քիրը տըւս եկավ, քյնանց
Էկավ մեկ էլ էն մինը լաց ըլավ,
Վա՜յ քիրա ջա՜ն, քիրա՜:
Սիրտս քյնանց, տըւս եմ կյանի,
Քիրա ջա՜ն, է՜յ:
Անահիտ ջան, քույրիկ ջա՜ն,
Տըւ թառն իր սիրըմ,
Քիրա ջա՜ն, է՜յ:
Տըւ երգն էիր սիրըմ,
Քիրա ջա՜ն, է՜յ:
Էտ ո՞ւր ես մեռել, քիրա ջա՜ն,
Էտ իմ տեղն ա, քիրա ջա՜ն,
Վե կացի, ես ըտեղ մտնեմ,
Քիրա ջա՜ն, է՜յ:
Ա՜յ իմ խելունք քիրա ջան,
Քիրա ջա՜ն, է՜յ:

**19 (361)**

Է՜ լարի լա, լահ լարի լա,
Մամիկոն ջան, է՜յ:
Ես տապ անեմ, տըւ քըքի,
Տըւ տապ արա, ես քըքնեմ,
Մամիկոն ջան, է՜յ:
Է՜յ Մամիկոն ջան, Մամիկոն ջան,
Էն օրն եմ ուզըմ, Մամիկոն ջան,
Էն վըեր ճըղացըմը կըրկենի ինք հունցըմ
Ու մոխրի միջին թխըմ ուտըմ,
Մամիկոն ջան, է՜յ:
Էն օրն եմ ուզըմ, Մամիկոն ջան,
Վըեր բաղըմը պահի ծըռներիս
Ճոփ ինք ճըրըմ, ծառ ինք տընգըմ,
Մամիկոն ջան, է՜յ:
Էն օրն եմ ուզըմ, Մամիկոն ջան,
Վըեր մեր ըրեխեքը խուրդա ին,
Հմի մեծացել, քե պիհիլի վախտն ա,
Համա կա վըե՜չ,
Մամիկոն ջան, է՜յ:

**20 (362)**

Վա՜յ լա՜հ լա՜ լիրամ, լա՜հ լա լիրամ,
Մամիկոն ջա՜ն,
Էտ ե՞փ իր մեռել, վըեր սօր մեռել ես,
Մամիկոն ջա՜ն,
Տըւ տապ արա, ես քեզ փըռնեմ, Մամիկոն
ջա՜ն,
Ես տապ անեմ, տըւ ինձ փըռնի, Մամիկոն
ջա՜ն:
Միտտ ա՞, վըեր Կարմիր ըխպրի դռշերըմ,
Էն սարերի միջին թըլթըլ ինք ըլըմ, Մամիկոն
ջա՜ն:

Վա՜յ լահ լա լիրամ, լա՜հ լա՜ լիրամ,
Մամիկոն ջա՜ն,
Տըւ տապ արա, ես քեզ փըռնեմ, Մամիկոն
ջա՜ն,
Ես տապ անեմ, տըւ ինձ փըռնի, Մամիկոն
ջա՜ն:

Էռնա՜կ էն վախտը, վըեր քե հրցնըմ ին,
Ասըմ. «Էտ վըերդիացի՞ իր»
Ասըմ իր. «Ես թովուզեցի եմ,
Համա տակինս պերթցի ա», Մամիկոն ջա՜ն:

Վա՜յ լա՜ի լա՜ լիրամ, լա՜ի լա լիրամ,
Մամիկոն ջա՜ն,
Տռն տապ արա, ես քեզ փըռնեմ, Մամիկոն
ջա՜ն,
Ես տապ անեմ, տռն ինձ փըռնի, Մամիկոն
ջա՜ն:

21 (363)

Լարի լա, լախ լարի լա՜,
Լախ լարի լա, լախ լարի լա՜,
Դե արի՛, արի՛, Մամըկոն ջա՜ն,
Մամըկոն ջան, Մամըկոն ջա՜ն,
Լա՜ի,լա՜ի, լախ լարի լա՛:

Ես տապ անեմ, տռն փըռնի՜,
Տռն տապ արա, ես փըռնեմ,
Մամըկոն ջան, Մամըկոն ջա՜ն,
Վըեր գյդնցել ի տռն էտքան լավն ես,
Մամըկոն ջան, Մամըկոն ջա՜ն,
Քեզ իրեք հետ Կարմիր ըխպըրի
Դյերովը դյերցնիլ չի տալ,
Մամըկոն ջան, Մամըկոն ջա՜ն,
Լա՜ի, լա՜, լախ լարի լա՛:

Լարի լա, լախ լարի լա՜,
Լարի լա, լախ լարի լա, լախ լարի լա:
Դե արի՛, արի՛, Մամըկոն ջան,
Մամըկոն ջան, Մամըկոն ջա՜ն:
Վըեր գյդնցել ի տռն էտքան լավն ես
Մամըկոն ջան, Մամըկոն ջա՜ն,
Քեզ իրեք հետ Կարմիր ըխպըրի
Դյերովը դյերցնիլ չի տալ,
Մամըկոն ջա՜ն, Մամըկոն ջա՜ն:

Իմ Մամկոյին տուն միք գիդալ,
Իմ Մամըկոն վըեր ծըղացիցը կյալիս ա,
Կյալիս ա ըլըրկոլոլ,
Վըեր լըռըցնըմ ե՜մ, տեղըմը տըռնըմ,
Դե աչկըտ ու պայրին տես,
Պայրին տե՜ս: